

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՄԻՐԱՀԱՐՆԵՐԻ ԱՅԳՈՒՄ



Երեւանի Միրահարների այգին (նախկին Պուշկինի անվան) այսուհետ երեւանցիներին ներկայանալու է բարեկարգ ճեմուղիներով, կանաչապատված ու լուսավոր դեմքով: Այսօր այգու պաշտոնական բացման արարողությանը այն ողջունեց պատվավոր հյուրերին, որոնց թվում նաեւ Սերժ Սարգսյանն ու այգու վերակառուցումը ֆինանսավորած բարերարները:

Այգու 1,5 հա տարածքում կառուցվել են արհեստական լճակներ եւ ջրվեժներ, կատարվել են այգու լուսավորման աշխատանքները, տեղակայվել է կրպակ-սրճարան այցելուների համար, նախատեսվում է նաեւ ոռոգման եւ ձայնային համակարգեր ու մարզական սեղաններով տաղավար-շվաքարաններ շախմատ, նարդի եւ այլ խաղերի համար: Այգին կառուցվել է Պողոսյան հիմնադրամի ջանքերով: Նշենք, որ բացման արարողությանը լրատվամիջոցներից շարքում Ա1+-ը հրավիրված չէր: